ԿԱՐԾԻՔ

ԶԱՐԱ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ «ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՍԿԱՑՄԱՆ ԲԱՆԱԼԻ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես հայտնի է, արդի իրականության մեջ շարունակաբար սերտանում են կապերը տարբեր գիտակարգերի միջև, իսկ երբեմն կազմում են առանձին համակցված ոլորտներ: Սույն հանգամանքը ստիպում է վերանայել այս կամ այն գիտակարգի տեղն ու դերն արդի տցիալական զարգացումների համատեքստում: Նման գիտակարգերին է վերաբերում նաև լեզվաբանությունը, որն ի թիվս մի շարք հումանիտար և հասարակական գիտությունների, ինչպիսիք են փիլիսոփայությունը, հոգեբանությունը, մանկավարժությունը, մարդաբանությունը, տցիոլոգիան, հաշվողական գիտությունը, սերտորեն առնչվում է նաև իրավագիտությանը: Այս հանգամանքը պայմանավորում է սույն հետազոտության արդիականությունը:

Լեզվաբանության առնչությունը վերջինիս հետ թելադրում է նաև նոր հարցադրումներ, հետազոտություններ և մեթոդաբանական մոտեցումներ: Գրախոսման ներկայացված սույն ատենախոսությունը նվիրված է իրավական խոսույթին, մասնավորապես քրեադատահիրավական խոսույթի լեզվառճական առանձնահատկություններին: Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրության առարկա է դարձել դատավարության երկու հակառակ բևեռի՝ դատախազի և իրավապաշտպանի, ճառերի առանձնահատկությունները, մասնավորապես՝ կառուցվածքային և ոճական առանձնահատկությունները: Թերևս այս՝ վերջին հանգամանքը ապահովում է աշխատանքի նոյնույթը:

Կառուցվածքային առումով՝ աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքի վերջում ներկայացված է գրականության ցանկը և թվայնացված կորպուսային աղբյուրները:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Theoretical foundations of legal discourse and rhetoric», նախ հանգամանորեն վերլուծվում, ապա ամփոփվում են տեքստի և խոսույթի հայեցակարգայնացման սկզբունքները: Հիմք ընդունելով Թեուն Վան Դեյքի (1985), Ջեյմս Ջիի (1999), Լյուք Մքարթիի և Բրայան Քլենսիի (2019), Ջոն Թեյլորի (1996), Նինա Հարությունովայի

(1990), Ջեյմս Աշերի և Չարլզ Փերսի (2014), Սեդա Գասպարյանի և այլոց աշխատություններում մշակված սկզբունքները՝ ատենախոսը բազմակողմանիորեն ներկայացնում է տեքստի և խոսույթի տարամետ և զուգամետ հատկությունները:

Աշխատանքի այս գլխում քննության են առնվում նաև իրավական և օրենսդրական խոսույթի ներհատուկ հատկանիշների ընդհանրությունները և տարբերությունները: Հանգամանորեն վերլուծվում են իրավական փաստարկման դասական հռետորաբանության հիմունքները, ճարտասանության կառուցվածքային տարրերը, իրավական և օրենքներին առնչվող խոսույթի միջև տարբերությունները: Լուսաբանման առարկա են դառնում հռետորական արվեստի բաղադրիչների՝ լոգոսի, էթոսի, փաթոսի, առանձնահատկությունները: Առանձին լուսաբանման առարկա է դառնում համոզելու արվեստի ինքնատիպ հատկանիշները, ինչն անհրաժեշտ է դատավարության մասնակիցներին: Աշխատանքի այս բաժինը վկայում է, որ ատենախոսը քաջ ծանոթ է քննվող հարցերին վերաբերող տեսական դրույթներին և տարբեր լեզվաբանների կարծիքներին, որոնք առանձին-առանձին քննվում են: Ատենախոսը գալիս է այն եզրակացության, որ ոճական հնարքները և հռետորաբանությունը համոզելու արվեստի անքակտելի մասն են կազմում՝ մի բան, որն անհրաժեշտ է իմանալ իրավաբանները:

Ատենախոսության երկրորդ և առանցքային գլուխը գալիս է իրականացնելու հետևյալ խնդիրը՝ փաստական նյութի հիման վրա ցույց տալ, թե ինչպես է համոզելու դասական դոկտրինն իրացվում դատական նիստերի դահլիճում, մասնավորապես դատախազի և դատապաշտպանի խոսքում: Կարևորելով քրեադատավարությունների հիմքում ընկած տարբեր սոցիալական և սոցիոքաղաքական իրավիճակները՝ ատենախոսը կառուցում է իր վերլուծությունը չորս տարբեր տեսակի դեպքերի հիման վրա: Հատկանշական է, որ դրանցից մեկը Արցախի բնակչության շրջափակման և բռնի տեղահանման վերաբերյալ դատավարության վերլուծությունն է, ինչն աշխատանքը դարձնում է է՛լ ավելի արդիական Հայաստանի սոցիալ-քաղաքական համատեքստի լույսի ներքո: Բոլոր չորս դատավարությունների լեզվաոճական վերլուծությունները կատարվում են միևնույն տրամաբանությամբ. զուգահեռաբար քննվում են դատավարության երկու կենտրոնական մասնակիցների՝ պետական մեղադրողի՝ մի կողմից, և դատապաշտպանի՝ մյուս կողմից, ճառերը: Դա վերաբերում է թե՛ մեկնարկային, այն է՝ մեղադրական, ճառին և առարկման կամ մեկնաբանող ճառին, թե՛ եզրափակիչ խոսքին: Վերլուծության նպատակով ատենախոսը

տրոհում է համապատասխան ճառերը հատվածների և առանձին-առանձին անդրադառնում է այն լեզվական միավորներին, որոնք այս կամ այն չափով ունեն համոզելու որոշակի արժույթ և կարող են նպաստել իրենց կողմի դատավճռի ձեռքբերմանը: Ամբողջ շարադրանքի ընթացքում ատենախոսն անդրադառնում և գնահատում է թե՛ բառային, թե՛ ձևաբանական և շարահյուսական միջոցները, որոնք դատավարության երկու կողմերը կիրառում են իրենց ճառերում: Ատենախոսն առանձնացնում է շարահյուսական այն միջոցները, որոնք իրենց գործառական նշույթավորվածությամբ կարող են ունենալ գործաբանական ներուժ և ազդեցություն դատավորների վրա՝ ցանկալի դատավճիռը ստանալու նպատակով: Այսպես՝ քննության առարկա են դարձել շարահյուսական զուգահեռ կառույցները, կրկնողությունները, հռետորական հարցերը, բարդ համադասական և ստորադասական նախադասությունները, ուղիղ և անուղղակի խոսքը, որոնք այս կամ այն չափով ձևավորում և առկայացնում են համոզելու իմույթները՝ հանդես գալով որպես վերջիններիս պոտենցիալ իմակներ: Գովասանքի են արժանի ատենախոսի ներկայացրած համապատասխան տոկոսային հարաբերությունները, ինչն էլ ավելի ակներև է դարձնում դատախազի և դատապաշտպանի ճառերում կիրառվող զուգամետ և տարամետ ոճական դրսևորումները:

Եզրակացության բաժնում ատենախոսը ամփոփում է իր հետազոտության արդյունքները հակիրճ եզրակացությամբ:

Գնահատելով այն ամեն դրականը, որ անկասկած ունի իր մեջ սույն ատենախոսությունը՝ ցանկանում ենք կանգ առնել որոշ թերությունների և վիճարկելի դրույթների վրա.

1. Աշխատանքում երբեմն ատենախոսը պարզապես առանձնացնում է քերականական ձևեր՝ առանց մեկնաբանելու դրանց պոտենցիալ գործաբանական ներուժը կամ հարաբերակցելու հռետորաբանության որևէ ռազմավարության հետ (էջեր 39, 55, 59, 75, 83).
2. Աշխատանքում որոշ բառային միավորներին արհեստականորեն վերագրում է ոճական հնարքների կարգավիճակ, այնինչ դրանք պարզապես իրականության փաստական ներկայացումներն են: Այսպես, օրինակ, 77-րդ էջում more համեմատական ձևը more than 50 ethnicities բառակապակցության մեջ ատենախոսի կողմից դիտարկվում է որպես ոճական տարր, որն ընդգծում է իբր կարևոր ազգային

փաստ: 86-րդ էջում ethnic Armenian presence, do no do so slightly բառակապակցությունները, ըստ ատենախոսի, հայ փաստաբանի խոսքին լրջություն են հաղորդում, թեև, համոզված ենք, համաշարադրանքի այս հատվածում նա այդպիսի նպատակ չէր հետապնդում: Նույն էջում ատենախոսն անորոշ դերբայի to մասնիկի կրկնողությունը բացատրում է որպես անհրաժեշտ գործողությունների կատարման ընդգծում, այնինչ դա պարզապես տվյալ նախադասության ընդարձակությամբ և միևնույն ժամանակ համասեռ անդամների հեռավորությամբ պայմանավորված շարահյուսական պահանջ է:

3. Գտնում ենք, որ որոշ հատվածներ առհասարակ որևէ մեկնաբանման կարիք չունեն, քանի որ ինքնին ավելի քան հասկանալի է, թե ինչ գործառույթ են դրանք կատարում: Այսպես, օրինակ, էջ 85-ում ատենախոսը մեկնաբանում է that is հատվածի պարզաբանում ներմուծելու գործառույթը:
4. Որոշ դեպքերում գտնում ենք քերականական ձևերի սխալ մեկնաբանում: Այսպես, օրինակ, էջ 40-ում, հղում անելով Common sense tells you that there are always two sides to a story և And you will hear from Mr. Martin that Mr. Hall and Mr. Floyd refused, ատենախոսը նշում է, որ that շաղկապի կիրառությունը հեշտացնում է իրավիճակի ընկալումը, մինչդեռ that շաղկապի կիրառությունը պարզապես շեշտադրում է դրան հաջորդող տեղեկությունը՝ փոխանցելով դրան ավելի մեծ տեղեկատվական կշիռ: Մեկ այլ հատվածում (էջ 54) ատենախոսը վերագրում է դատախազի ճառում ներկա անորոշ կերպաժամանակային ձևի կիրառությունը մեղադրյալի մշտական սովորական պահվածքին, մինչդեռ նշված ձևը կատարում է բոլորովին այլ գործառույթ:
5. Որոշակի թյուրըմբռնում է առաջացնում morpho-syntactic investigation համակցությունը, որն օգտագործվում է աշխատանքի տարբեր հատվածներում: Ինչպես հայտնի է, morpho-syntactic կամ morphosyntax եզրույթները մեծապես վերաբերում են բառերի բաղադրիչ մաս կազմող միավորների համակցությանը կամ նրանց միջև առկա շարակարգային հարաբերություններին, ինչպես նաև բառային միավորների միջև շարակարգային հարաբերություններին: Գտնում ենք, որ սույն աշխատանքում ատենախոսը, հղում անելով բայի ժամանակաձևերի, ինչպես նաև

բարդ նախադասություն կազմող նախադասություն բաղադրիչներին, պետք է գործածեր morphological and syntactic analysis բառակապակցությունը:

Նշված թերություններն այնուամենայնիվ չեն նսեմացնում ատենախոսության արժեքը և գիտականությունը: Կատարված լինելով մեծածավալ փաստական նյութի հիման վրա՝ այն անշուշտ ընդլայնում է իրավական խոսույթի կառուցվածքային և գործառական հայեցակարգերի վերաբերյալ տեսությունը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության մեջ ներկայացրած տեսակետներին և եզրակացություններին, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Զարա Սամվելի Հայրապետյանն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին և միջնորդել Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար Լեզուներ» մասնագիտական խորհրդին նրան շնորհելու այդ աստիճանը:

Գրախոս՝ Վ. Բրյուսովի անվան պետական

համալսարանի լեզվաբանության ամբիոնի վարիչ,

բ.գ.թ., դոցենտ Կ.Ա.Վեյան

Հաստատում եմ դոցենտ Կ. Վեյանի ստորագրությունը

Վ. Բրյուսովի պետական համալսարանի գիտքարտուղար Հ.Հ. Փիլավջյան

11.10.2026